Բակային տարածքներում և փողոցներում ասֆալտապատվել է 46 255 քմ ընդհանուր մակերեսով տարածք:

Վերանորոգվել է 540 քմ հենապատ.

- Մ.Մելիքյան 15, 17 շշ.,
- Զ.Սարկավագի փ. 149շ.-131շ. հատված,
- Յ.Ռայնիսի 90շ.,
- Թբիլիսյան խճ. գետնանցում,
- թիվ 147 դպրոցի հենապատ:

Կառուցվել է 4 թեքահարթակ

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում կատարվել են բարեկարգման, խնամքի և պահպանման աշխատանքներ՝ 52 հա:
- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է թվով 90000 ծաղկասածիլ և 40000 կակաչի սոխուկ:
- Իրականացվել են հուշարձանների և դրանց շրջակա տարածքների մաքրման և խնամքի աշխատանքներ:
- Էտվել, ձևավորվել և երիտասարդացվել է 620 ծառ, ինչպես նաև հատվել են չոր ծառեր:
- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է թվով 1420 ծառ:
- Ստեղծվել է 2580 քմ սիզամարգ:
- Վերանորոգվել է 182 զծմ ջրագիծ:

- Թվով 40 շենքերում նորոգվել է 470 գծմ ջրթափ խողովակ:
- Թվով 169 շենքերում նորոգվել է 1570 գծմ երկարությամբ ջրամատակարարման ու ջրահեռացման ցանց:
- Թվով 40 շենքերում ապակեպատվել են 370 քմ ընդհանուր մակերեսով շքամուտքերի դռներ և լուսամուտներ:

- Թվով 15 շենքերում վերանորոգվել է 35 մուտք:

Բնակֆոնդի պահպանում

- Վերանորոգվել է 2947 քմ հարթ և 1390 քմ թեք տանիք:

•Թվով 5 շենքերում իրականացվել են 10 պատշգամբների վերանորոգման, մաքրման, ներկման աշխատանքներ

Համագործակցություն համատիրությունների հետ

- Բազմաբնակարան շենքերում նորոգման աշխատանքների իրականացման համար համատիրություններին տրամադրվել է 10 մլն դրամի աջակցություն:

Բակային տարածքների բարեկարգում

- Բարեկարգվել և հանգստի գոտիներ են կառուցվել բակային 3 տարածքներում:
- Տեղադրվել է մանկական 4 խաղ, 30 մարզասարք:

- Տեղադրվել է թվով 2 զրուցարան, 58 նստարան:

- Նկարազարդվել է 26 պատ:
- Կառուցվել է մինի ֆուտբոլի 1 խաղադաշտ:
- Իրականացվել են ցանկապատերի լրացման աշխատանքներ՝ 102,8 զծմ:

Այցելություն զորամասեր

- Իրականացվել է ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող 120 ժամկետային զինծառայողների ծնողների այցելություն զորամասեր:

- Փետրվարի 23-ի և մայիսյան տոների կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի թվով169 մասնակիցների ընտանիքներին հատկացվել է դրամական պարգև:
- Վարչական շրջանում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել է շուրջ 65 միայնակ, անժառանգ տարեցների տնային խնամք և սպասարկում:
- Տարբեր սոցիալական ծրագրեր են իրականացվում վարչական շրջանում գործող բարեգործական հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ («Վորլդ Վիժն Հայաստան», «Քեթրին» ՀԿ, «ՍՕՍ-մանկական գյուղեր» ՀԲՀ, ԱՌԴԱ ԲՀ, Հայ Ավետարանչական ընկերակցություն և այլն):

- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպման ծրագրով 90 երեխա երեք հերթափոխով ամառային հանգիստն է անցկացրել Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում, իսկ շուրջ 200 երեխայի համար կազմակերպվել է չորս բակային ճամբար:
- Գիտելիքի օրվա կապակցությամբ շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 250 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ:

- Դրամական օգնություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով 69 ընտանիքի:
- Հուղարկավորության ծախսերը փոխհատուցելու նպատակով 29 ընտանիքի ցուցաբերվել է աջակցություն:
- Սոցիալական տանը գործող բաղնիքի անվճար ծառայությունից օգտվել է շուրջ 1020 շահառու:
- Թվով 68 կարիքավոր ընտանիքի հատկացվել է 110 խմ վառելափայտ:
- Վարչական շրջանում գործող երեք բարեգործական ճաշարաններից օգտվում են 450 շահառու:
- «Արի տուն 2015» ծրագրով վարչական շրջանի հյուրընկալ ընտանիքներն իրենց հարկի տակ են ընդունել 9 սփյուռքահայ երեխաների:
- Վարչական շրջանում բնակվող սիրիահայ 56 ընտանիքի պարբերաբար տրամադրվել է սնունդ, հագուստ, կոշիկ, ծածկոց, անկողնային պարագաներ, դրամական աջակցություն:
- Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է այցելություն վարչական շրջանի ամենատարեց բնակիչներին, հատկացվել են նվերներ և դրամական աջակցություն:
- Ծնողազուրկ անչափահաս երեխաներ ունեցող թվով 45 ընտանիքի հատկացվել է դրամական աջակցություն:
- Վարչական շրջանում գործող Գերմանական Կարմիր Խաչի և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի բարեգործական ճաշարանների շուրջ 340 շահառուների համար ՀՀ պետական և եկեղեցական տոների կապակցությամբ կազմակերպվել են տոնական միջոցառումներ:
- Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ 50 ընտանիքի, հաշմանդամների միազգային օրվա կապակցությամբ 150 հաշմանդամի և Ամանորի կապակցությամբ 1300 ընտանիքի հատկացվել է սննդի փաթեթ:
- «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության սոցիալական ծրագրի շրջանակում նվերներ (կենցաղային տեխնիկա) են հատկացվել վարչական շրջանի թվով 205 ընտանիքի:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 2 մանկապարտեզներում և թվով 3 դպրոցներում:

- Պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:

- Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Կենտրոնացված գրադարանային համալիրի 2 մանկապարտեզներում:

- Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոցում

- Պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ, հանդեսներ, խաղեր և մրցույթներ:

Վարչական շրջանի թիմը մասնակցել է՝

- ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված հանրակրթական դպրոցների 24-րդ մարզական խաղերի շրջանային փուլի մրցումներ
- ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության շրջանային փուլի մրցումներ:
- «Լավագույն մարզական ընտանիք » մրցույթի շրջանային և քաղաքային փուլերի մրցումներին
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք » համաքաղաքային բակային փառատոնի շրջանային փուլի մրցումներին:

Առողջապահության ոլորտ

- Երևանի քաղաքապետի նախաձեռնած «Ձեզ համար, կանայք» խորագրով միամսյակի շրջանակում անվճար հետազոտվել է 3761 կին:
- Պետպատվերի շրջանակում անվճար բուժօգնություն ստանալու նպատակով 19 քաղաքացու տրվել է միջնորդագիր:
- Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի 1-ին խմբի երեք հաշմանդամների բուժման և դեղորայքի ձեռքբերման նպատակով յուրաքանչյուր եռամսյակ ցուցաբերվել է դրամական օգնություն:

Վարչական շրջանը հյուրընկալել է «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության շրջանակում Երևան ժամանած Իրանի Իսլամական Հանրապետության Ղազվին քաղաքի փոխնահանգապետ Այուբ Ռահիմիի գլխավորած պաշտոնական պատվիրակությանը:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը համագործակցել է ԼՂՀ շրջանների և ՀՀ մարզերի հետ :